

# ՍԱՂՄՈՍ 29

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ ձայնը փոթորկի մեջ	Փառք Աստծուն Իր սրբության և վեհափառության մեջ	Օրհներգ ուղղված փոթորկի Աստծուն	ՏԻՐՈՋ ձայնը փոթորկի մեջ	Փոթորկի ՏԻՐՈՋն ուղղված օրհներգ
<u>MT նախաբան</u> Դավթի Սաղմոսը				
29:1-2	29:1-2	29:1-2	29:1-2	29:1-2
29:3-9	29:3-4 29:5-7 29:8-9	29:3-4 29:5-6 29:7-8 29:9	29:3-4 29:5-6 29:7-9	29:3-4 29:5-6 29:7-9բ 29:9գ-11
29:10-11	29:10-11	29:10-11	29:10-11	

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա բնական հայտնության մասին սաղմոս է (այսինքն՝ Աստված ստեղծագործության միջոցով հայտնում է Իրեն բոլորին):

1. Սաղմոս 19:1-6 (ստեղծագործության մեջ լուռ ձայնը՝ լռությունը)
2. Հռոմեացիների 1:19-23 (Աստծո գիտությունը բնությունից)
3. Հռոմեացիների 2:14-16 (ներքին բարոյական վկայությունը)

Բ. Սաղմոսի պատկերները ընդգրկում են՝

1. ՅԱՀՎԵԻ կողմից սկզբնական ստեղծագործության մեջ քառսին հաղթելը (այսինքն՝ ջուրը, տես՝ Սաղմ.29:3,10, «ջրհեղեղ» տերմինը [BDB 550] հանդիպում է միայն այստեղ և Ծննդոցում՝ 6-11 գլուխներում):
2. ՅԱՀՎԵԻ գորությունը փոթորկի մեջ (տես՝ Սաղմ.29:3-9, տես՝ Սաղմ.18:7,15)

Գ. ՅԱՀՎԵՆ՝ ոչ թե *Բահադր*, հաղթում է, վերահսկում և ուղարկում ջրերին: Շատ գիտնականներ նշում են, որ բազմաթիվ նմանություններ կան Ուգարտական առասպելաբանության և այլ ՀՄԱ-ի գրականության միջև: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՄԱ-Ի ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ:

Դ. UBS *Ձեռնարկը* հաստատում է, որ այս սաղմոսը քիզված է (էջ՝ 275):

1. ՅԱՀՎԵԻ անվան քառակի կիրառություն Սաղմ.29:1-2 և 10-11-ում:
2. «գորություն» (BDB 738) Սաղմ.29:1 և 11-ում
3. Սաղմ.29:3 և 10-ում նշված ջրերը
4. ՅԱՀՎԵԻ վեահափառությունը՝ նշված Սաղմ.29:4 և 10-ում
5. ծառերը՝ նշված Սաղմ.29:5 և 9-ում
6. Սաղմ.29:6 և 8-ում աշխարհագրական տեղանքները

Իմ ինդիքն այս հարցում այն է, որ քիզված սովորաբար ամենակարևոր աստվածաբանական ձևակերպումը տեղակայում է հենց մեջտեղում, սակայն 7-րդ համարը այս ձևաչափին չի համընկնում:

Ե. Այս Սաղմոսը կարող է վերաբերել՝

1. աստվածհայտնության, քանի որ ՅԱՀՎԵՆ նկարագրվում է որպես կատաղի փոթորկի պատկերով եկող
2. սակայն շեշտադրությունը ռազմական հաղթանակն է (տես՝ Սաղմ.29:11)

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 29:1-2**

<sup>1</sup>ՏԻՐՈՂԸ տվեք, ո՛վ հզորներ,

ՏԻՐՈՂԸ տվեք փառք ու գորություն:

<sup>2</sup>ՏԻՐՈՂԸ տվեք Իր անվանն արժանի փառքը,

Ու սրբության գեղեցկությամբ ՏԻՐՈՂԸ երկրպագեցեք:

**29:1-2 «տվեք»** Այս ԲԱՅԸ (BDB 396, KB 393, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կրկնվում է երեք անգամ: Այն հիմնականում նշանակում է «Աստծուն փառք տալ» (տես՝ 2 Օր.32:3): Այս նույն օրինաչափությունը նաև առկա է Սաղմ.96:7-8-ում և 1 Մնաց.16:28-29-ում: Երեք անգամ կրկնությունը մատնացույց է անում գերադրական շեշտադրություն:

**29:1**

**NASB**

«հզորի որդիներ»

**NKJV**

«դուք հզորներ»

**NRSV, TEV**

«երկնային էակներ»

**NJB, LXX**

«Աստծո որդիներ»

**JPSOA**

«աստվածային էակներ»

**REB**

«դուք հրեշտակային գորություններ»

MT տալիս է «աստվածների որդիներ» (բառացի՝ «*Elim* –ի որդիներ», BDB 119 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 42): Այն նկատի ունի հրեշտակներին (տես՝ Ծննդոց 6:2 [*«էրհիխի»* որդիները]), Սաղմ

. 103:20-21) կամ երկնային հրեշտակային խորհուրդը (տես՝ Ելից 15:11, 4 Թագ. 22:19, Սաղմ. 82:1, 86:6-8):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. «Աստծո որդիները» Ծննդոց 6-ում**  
**SPECIAL TOPIC: “the sons of God” in Genesis 6**

Ա. Մեծ հակասություն կա «Աստծո որդիներ» արտահայտության նշանակության շուրջ: Եղև են երեք հիմնական մեկնաբանություններ.

1. Արտահայտությունը վերաբերում է Սեթի աստվածավախ տոհմաձառին (տես՝ Ծննդոց 5, տե՛ս 4:14-ի գրառումը)
2. Արտահայտությունը վերաբերում է հրեշտակային էակների մի խմբի
3. Արտահայտությունը վերաբերում է թագավորների կամ հսկաների կամ Կայենի տոհմաձառին (տես՝ Ծննդոց 4)

Բ. Սեթի տոհմաձառին վերաբերելու ապացույցներ՝

1. Ծննդոց 4 և 5-ի անմիջական գրական համատեքստը ցույց է տալիս Կայենի ապստամբ տոհմաձառի և Սեթի ընտրյալ տոհմաձառի զարգացումները: Հետևաբար համատեքստային ապացույցը կարծես թե հավանություն է տալիս Սեթի աստվածավախ տոհմաձառին
2. Ռաբբիներն այս հատվածը հասկանալու հարցում տարաձայնություններ ունեն: Ոմանք պնդում են, որ այն վերաբերում է Սեթին (սակայն շատերը՝ հրեշտակներին):
3. «Աստծո որդիներ» հոգնակի արտահայտությունը, չնայած շատ հաճախ կիրառվում էր հրեշտակային էակների համար, երբեմն էլ վերաբերում էր մարդկանց՝  
ա. 2 Օր. 14:1՝ «ՅԱՀՎԵ քո Աստծո որդիները»  
բ. 2 Օր. 32:5՝ «Նրա որդիները»  
գ. Ելից 22:8-9; 21:6 (հավանաբար Դևտացի դատավոր)  
դ. Սաղմոս 73:15՝ «Զո որդիները»  
ե. Ովսեա 1:10՝ «Կենդանի Աստծո որդիները»

Գ. Հրեշտակային էակներին վերաբերելու ապացույցներ՝

1. Սա համարվել է այս հատվածի ամենատարածված ավանդական ըմբռնումը: Ծննդոցի ավելի լայն համատեքստը կարող էր պաշտպանել այս տեսակետը որպես գերբնական չարի մեկ այլ օրինակի, որը փորձում է խեղաթյուրել մարդկության համար Աստծո կամքը (ռաբբիները ասում են՝ «նախանձից ելնելով»)
2. ՀԿ-ում հոգնակի արտահայտությունը («Աստծո որդիները») չափազանց շատ է կիրառվում հրեշտակների համար  
ա. Հոբ 1:6  
բ. Հոբ 2:1  
գ. Հոբ 38:7  
դ. Սաղմոս 29:1  
ե. Սաղմոս 89:6,7  
զ. Դանիել 89:6
3. Անկանոն 1 Ենովքի գիրքը (տես՝ 1 Ենովք 6:1-8:8; 12:4-6; 19:1-3; 21:1-10) և Հորեյանը (տես՝ Հոբ 5:1), որոնք շատ տարածված էին ՆԿ-յան հավատացյալների ժամանակաշրջանում, Մեռյալ Ծովի Գալարներից *Ծննդոցի Անվալերի Գրքերի* հետ միասին, մեկնաբանում է որպես ապստամբ հրեշտակներ
4. Վեցերորդ գլխի անմիջական համատեքստը ակնարկում է, որ «հզոր մարդիկ, որոնք հնուց ի վեր անվանի էին» ծնվեցին ստեղծագործության այս անկանոն խառնուրդից:
5. Սեպտուագինտան այս «Աստծո որդիներ» արտահայտությունը թարգմանում է որպես «Աստծո հրեշտակներ»

6. 1 Ենովքի գիրքը նույնիսկ պնդում է, որ Նոյի ջրհեղեղը եղավ, որպեսզի ոչնչացնի այս հրեշտակ-մարդ միությունը, որը թշնամություն էր ՅԱՀՎԵԻ և ստեղծագործության համար Նրա ունեցած ծրագրի հանդեպ (տես՝ 1 Ենովք 7:1; 15:1; 86:1)
7. Ուգարտական գրականության մեջ «Աստծո որդիներ» արտահայտությունը վերաբերում է պանթեոնի անդամներին (այսինքն՝ ավելի ստորադաս հոգևոր էակներին)

Դ. Կայենի տոհմաձառի թագավորներին կամ հսկաներին վերաբերող արտահայտության համար ապացույց

1. Գոյություն ունեն մի քանի հնագույն թարգմանություններ, որանք պաշտպանում են այս տեսակետը
  - ա. Օնկելոսի Թարգումը (մ. թ. երկրորդ դար) թարգմանում է «Աստծո որդիներ» արտահայտությունը որպես «ազնվականների որդիները»
  - բ. ՀԿ-ի հունարեն Միմաչուսի (մ. թ. երկրորդ դար) թարգմանությունը այս արտահայտությունը թարգմանում է որպես «թագավորների որդիները»
  - գ. «Էլոհիմ» տերմինը կիրառվում է իսրայելացի առաջնորդների համար (տես՝ Ելից 21:6; 22:8; Սաղմ. 82:1,6), NIV և NET Աստվածաշնչերում:
  - դ. Ծննդոց 6:4-ում *Nephilim*-ը /հսկաներ/ կապված է *Gibborim*-ի հետ, որը նշանակում է «քաջասիրտ, զորավոր, հարուստ կամ իշխանություն ունեցող հզոր մարդիկ»
  - ե. այս մեկնաբանությունը և դրա ապացույցը վերցված է Աստվածաշնչի խրթին խոսքերը գրքից, էջ՝ 106-108:

Ե. Երկու կիրառությունների պաշտպանության համար պատմական ապացույցներ

1. Արտահայտությունը վերաբերում է Սեթի սերնդակիցներին՝
 

ա. Ալեքսանդրիացի Կիրիլ	ե. Կավլին
բ. Թեոդոռեթ	զ. Կայլ
գ. Օգոստինոս	է. Գլիսոն Արչեր
դ. Ջերոմ	զ. Ուոթս
2. Արտահայտությունը վերաբերում է հրեշտակներին՝
 

ա. Սեպտուագինտայի գրողները	է. Տերտուղիանոս	իւ. Օլֆորդ
բ. Ֆիլո	ը. Օրիգենոս	ծ. Ուեյթերմեն
գ. Չոզեֆոս ( <i>Հնություններ</i> 1:3:1)	թ. Լյութեր	կ. Ուենհեմ
դ. Չասթին Մարտիրոսը	ժ. Էուալդ	հ. NET Աստվածաշունչ
ե. Իրենեոս	ի. Դելից	
զ. Ալեքսանդրիացի Կլեմենտը	լ. Հենգստենբերգ	

Չ. Ինչպե՞ս են Ծննդոց 6:4-ի հսկաները կապված «Աստծո որդիների» հետ և Ծննդոց 6:1-2-ի «մարդկանց դուստրերի» հետ: Ուշադրություն դարձրեք հետևյալ տեսություններին.

1. Նրանք հրեշտակների և մարդկային կանանց միջև եղած միության արդյունքում ծնված հսկաներն են (տես՝ Թվոց 13:33):
2. Նրանք ընդհանրապես իրար հետ կապ չունեն: Նրանք պարզապես նշված են որպես Ծննդոց 6:1-2-ի օրերի դեպքերի ժամանակ և դրանցից հետո երկրի վրա գոյություն ունեցողներ:
3. Ռ. Կ. Հարրիսոնը *Հին Կտակարանի Ներածություն* /R. K. Harrison *Introduction to the Old Testament*/, էջ՝ 557-ում տալիս է հետևյալ գաղտնի մեջբերումը՝ «ամբողջովին կորցնելու անգնահատելի մարդաբանական նկարագրությունները *Homo sapiens*-ի և այս հատվածում նկարագրված նախքան Ադամը եղած տեսակների հետ

փոխհարաբերության մեջ, և որոնք էլ պարտավոր են այն գիտնականներին, որոնք զինված հետևում են իրենց»:

Սրանից կարող եմ ենթադրել, որ նա այս երկու խմբերին դիտարկում է որպես հումանոիդների երկու տարբեր խմբերի ներկայացուցիչների: Սրանից կարելի է ենթադրել, որ Ադամն ու Եվան հետագա հատուկ ստեղծագործություն են, բայց նաև *Homo erectus*-ի էվոլյուցիոն զարգացում:

Է. Ազնիվ կլինի իմ կողմից վերջում եզրափակել այս հակասական տեքստի վերաբերյալ իմ հասկացողությամբ: Առաջին հերթին, թույլ տվեք մեզ բոլորիս հիշեցնել, որ Ծննդոցի այս տեքստը շատ համառոտ և բազմանշանակ է: Մովսեսի առաջին լսարանը հնարավոր է ունեցել են հավելյալ պատմական աղբյուր կամ Մովսեսը օգտագործել է բանավոր կամ գրավոր ավանդույթ Նահապետական ժամանակաշրջանից, որն ինքն էլ լիովին չէր հասկանում: Այս հարցը ճակատագրական կարևորության աստվածաբանական թեմա չէ: Հաճախ մեզ հետաքրքրում են այնպիսի բաներ, որոնց մասին Սուրբ Գիրքը միայն ակնարկում է, սակայն դրանք բազմանշանակ են: Մեծ դժբախտություն կլիներ, եթե այս և նմանատիպ աստվածաշնչյան հատվածների տեղեկության հիման վրա կառուցվեր մանրակրկիտ աստվածաբանություն: Եթե մեզ անհրաժեշտ լիներ այս տեղեկությունը, ապա Աստված այն մեզ կհասցներ ավելի հստակ և մանրամասն կերպով: Ես անձնապես հավատում եմ, որ նրանք եղել են հրեշտակներ և մարդիկ, քանի որ .

1. Բովանդակությունը, չնայած որ միանշանակ չէ, սակայն «Աստծո որդիներ» արտահայտությունը ՀԿ-ում վերաբերում է հրեշտակներին
2. Մեպտուազինտան (Ալեքսանդրիական) «Աստծո որդիներ» արտահայտությունը թարգմանում է (Ք. Ա. առաջին դարի վերջ) որպես «Աստծո հրեշտակներ»:
3. 1 Ենովք անկանոն հայտնության գիրքը (հավանաբար գրված մոտ Ք. Ա. 200թ-ին) հատուկ նշում է, որ այն վերաբերում է հրեշտակներին (տես՝ 6-7 գլուխները):
4. 2 Պետրոս 2-ի և Հուդայի գրքում մեղանչած և իրենց բնակության հատուկ վայրը չպահած հրեշտակների միջև աստվածաբանական կապի պատճառով

Ես գիտեմ, որ ոմանց համար սա թվում է հակասելի Մատթեոս 22:30-ին, սակայն այս հատուկ հրեշտակները ո՛չ երկնքում էին գտնվում և ո՛չ էլ երկրի վրա, այլ մի հատուկ բանտում (*Տարտարոս*):

5. Կարծում եմ պատճառներից մեկը, որ Ծննդոց 1-11-ի շատ դեպքեր կարելի է գտնել այլ մշակույթների մեջ նույնպես (այսինքն՝ նմանատիպ պատմություններ արարչագործության, ջրհեղեղի, հրեշտակների, որոնք կանանց են առնում) այն է, որ այս շրջանում բոլոր մարդիկ միասին էին և ունեին որոշակի գիտելիքներ ՅԱՀՎԵԻ վերաբերյալ, բայց Բաբելոնի աշտարակաշինությունից հետո, երբ նրանք սփռվեցին, այս գիտությունը ապականվեց և վերածվեց բազմաստվածության մոդելի:

Այս բանի լավագույն օրինակներից է հունական առասպելները, որտեղ կես-մարդ, կես գերմարդ հսկաները, որոնք կոչվում էին Տիտաններ, բանտարկվում են *Տարտարոսում*, հենց այն նույն անունով կոչված վայրում, որի մասին Աստվածաշնչում միայն մեկ անգամ է նշված (տես՝ 2 Պետրոս 2), և այն հրեշտակների պահման համար է, որոնք չպահեցին իրենց հատուկ բնակատեղին: Ռաբբիական աստվածաբանության մեջ Դժողքում կա արդարների համար բաժին (դրախտ) և ամբարիշտների համար բաժին (*Տարտարոս*):

❖ «**փառք ու գորություն**» Սրանք տարածված տերմիններ են, որոնք ուղղված են ՅԱՀՎԵԻՆ:

1. փառք – BDB 458
2. գորություն - BDB 738

**29:2 «երկրպագեցե՛ք»** Սա բացման չորս ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻց չորրորդն է (բառացի՝ «խոնարհվե՛ք» BDB 1005, KB 295, *Hishpael* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Ահա թե ինչ են անում հավատարիմ հետևորդները, երբ գալիս են Նրա տանարը սրբության հանդերձանքով: Սա բովանդակում է ոչ միայն հագուստը, այլ նաև ուխտի հնազանդությունը: ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

❖ «Իր անվանը» Սա ՅԱՀՎԵԻՆ դիմելու դարձվածքային կերպ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ԱՆՈՒՆԸ

❖

<b>NASB</b>	«սուրբ հանդերձանքով»
<b>NKJV</b>	«սրբության գեղեցկությամբ»
<b>NRSV, NJB</b>	«սուրբ փառահեղությամբ»
<b>JPSOA, NASB լուսանցք</b>	«սրբության փառքով»
<b>REB, NET</b>	«սուրբ զարդարաքով»
<b>LXX, Peshitta</b>	«Նրա սուրբ սրահում»

Այս կասկածելի արտահայտությունը (BDB 214, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ BDB 871) նաև հանդիպում է տաճարի երկրպագության երեք տարբեր համատեքստերում (տես՝ Սաղմ. 96:9, 110:3, 1 Մնաց. 16:29): TEV ծանոթագրությունը առաջարկում է երեք հավանական կերպեր այս արտահայտությունը թարգմանելու համար:

1. Երբ Նա (ՅԱՀՎԵՆ) հայտնվի (Ուզարտական արմատ, տես՝ TEV, այսինքն՝ ՅԱՀՎԵՆ ԻՆՔՐ. այդ դեպքում սա կնմանվեր Ելից 19-20-ի աստվածհայտնությամբ)
2. երկրպագության հանդերձներ (նման կերպով նկարագրվում են Ահարոնի հանդերձները Ելից 28:2-ում)
3. Նրա գեղեցիկ տաճարում (կարծես թե անդրադարձում է LXX տարբերակը)

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 29:3-9**

<sup>3</sup>ՏԻՐՈՋ ձայնը ջրերի վրա է.

**Փառքերի Աստվածը որոտում է. ՏԵՐԸ շատ ջրերի վրա է:**

<sup>4</sup>ՏԻՐՈՋ ձայնը հզոր է, ՏԻՐՈՋ ձայնը մեծ վեհափառությամբ է լեցուն:

<sup>5</sup>ՏԻՐՈՋ ձայնը կոտրում է մայրիները,

**Այո՛, ՏԵՐԸ կոտրում է Լիբանանի մայրիները:**

<sup>6</sup>Նաև ցատկեցնում է նրանց հորթերի պես, Լիբանանին ու Սարիոնին՝ Միեղջյուրների ձագերի պես:

<sup>7</sup>ՏԻՐՈՋ ձայնը ճեղքում է կրակի բոցերը:

<sup>8</sup>ՏԻՐՈՋ ձայնը ցնցում է անապատը.

**ՏԵՐԸ ցնցում է Կադեսի անապատը:**

<sup>9</sup>ՏԻՐՈՋ ձայնը եղնիկներին ծնունդ է տալիս ու անտառները մերկացնում.

**Նրա տաճարում ամեն մարդ Նրա փառքն է հռչակում:**

**29:3-9** Այս պարբերության մեջ գերակշռում է «ՏԻՐՈՋ ձայնը» արտահայտությունը: Կարծես թե սա դիտարկելու երկու կերպ կա՝

1. ՅԱՀՎԵՆ Արարիչ, տես՝ Սաղմ. 29:3,10 (տես՝ Ծննդոց 1, Սաղմոս 93)
2. ՅԱՀՎԵՆ փոթորկի իրական Աստվածը և անձրև ուղարկողը (տես՝ Սաղմ. 29:3-9, այսինքն՝ *Psalms* հայտարարություններին հակառակ)  
Նկատել՝, թե ինչպես է նկարագրվում ՅԱՀՎԵԻ ձայնը (Սաղմ. 29:4-9)
1. հզոր (BDB 470)
2. վեհափառ (նույն արմատը Սաղմ. 29:2բ-ում, BDB 214)
3. կոտրում է մայրիները (ԲԱՅ, BDB 990, KB 1402, կրկնվում է Սաղմ. 29:5-ում)
4. ցատկեցնում է Լիբանանին ու Սարիոնին (այսինքն՝ Հերմոն լեռը, տես՝ 2 Օր. 3:9)
5. կրակի բոցերը՝ կայծակը (տես՝ Սաղմ. 18:12, 14) ճեղքում է ծառերը
6. ցնցում է անապատը (ԲԱՅ, BDB 296, KB 297, կրկնվում է Սաղմ. 29:8)
7. եղնիկներին ծնունդ է տալիս

8. անտառները մերկացնում է (BDB 362 I)

Կարևոր է հիշել, որ արտաբերված խոսքը շատ կարևոր և տարածված աստվածաբանական հասկացություն էր հին եբրայեցիների համար:

1. արտաբերված խոսքով ստեղծագործությունը – Ծննդոց 1
2. Աստծո խոսած խոսքի գորությունը – Եսայի 14:24, 25:1, 45:23, 46:10, 55:11, 59:21, Մատթ .24:35
3. Մեսիան կոչվում է «Խոսք» /Բան/ - Հովհ. 1:1-5, 14, Հայտն. 19:13
4. Վերադարձող Մեսիայի նկարագրությունը՝ լեզվի փոխարեն երսայրի սրով – Հայտն. 1:16, 2:12

**29:6 «Լիբանան... Սարիոն»** Սրանք Քանանի Ավետյաց Երկրի հյուսիսում գտնվող աշխարհագրական տեղանքներ են: «Սարիոն» տերմինը Հերմոն լեռան համար հազվադեպ է (տես՝ 2 Օր. 3:9): Այս և ակնհայտ համատեքստի կամ «փոթորկի» նկարագրության պատճառով շատ արդի գիտնականներ այս Սաղմոսը դիտարկել են որպես *Բահադին* (քանանացիների փոթորկի աստծո) ուղղված օրիգինալ օրհներգի վերամշակում: *Ռաս Շամրայի* տեքստերը բացահայտում են ՀԿ-ի քողարկված նկարագրություններից մեծ մասը քանանացիների առասպելաբանության լույսի ներքո: Եբրայեցի հեղինակները հաճախ են վերցնում հեթանոս աստվածությունների նկարագրություններ և փոխում դրանք ՅԱՀՎԵԻն ուղղված նկարագրությունների և տիտղոսների: Նրանք գիտեին, որ ՆԱ էր միակ և ճշմարիտ Աստվածը:

Հնագույն տիեզերաբանության համառոտ լավ քննարկման համար տես IVP *Սուրբգրային նկարագրությունների բառարան*, էջ՝ 169-174:

#### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

**29:9ա** Այս նույն ԲԱՅԸ (BDB 296, KB 297) թարգմանվել է «ցնցել» Սաղմոս 29:8-ում (երկու անգամ) այժմ կիրառվում է որպես ծնունդ տալ (տես՝ Հոր 39:1) և Եսայի 51:2-ում Սառայի ծնելու համար:

Եթե մեկը փորձում է պահպանել Սաղմ. 29:9բ-ի և 29:5բ-ի միջև համագոր զուգահեռականություն, ապա նա պետք է փոխի «եղնիկները» (MT, UBS Տեքստային Նախագիծը տալիս է “B” գնահատականը) «կաղնիների» (տես՝ TEV, NJB, միևնույն բաղաձայները, պարզապես ձայնավորների փոփոխությամբ): Սա արվում է փորձելու շարունակել հավանական քյաստիկ ձևաչափը:

NET Աստվածաշունչը (էջ՝ 885 #21) առաջարկում է «անտառներ» բառի շտկումը որպես «էգ քարայծեր», որպեսզի պահպանվի համագոր զուգահեռականությունը Սաղմ. 29:9ա-ի և 6-ի միջև: JPSOA որպես տարբերակ տալիս է ծանոթագրության մեջ՝ «մաքիներին ժամանակից շուտ ծնունդ է տալիս» (BDB 362 II):

**29:9գ** Այս ամբողջ գործողությանը ամփոփումն (այսինքն՝ հզոր որոտների ֆիզիկական հետևանքների) այն է, որ Նրա Տաճարում ամեն բան ասում է «Փահր»: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌ-Բ (ՀԿ):

ՅԱՀՎԵԻ՝ արարիչը, ապահովում է գյուղատնտեսական առատություն անձրևով իր ժամանակին: Արարիչը նաև Պահապանն է: (Տես հետաքրքիր հոդված «Մատակարարում» թմայով IVP *Սուրբգրային նկարագրության բառարան*, էջ՝ 681-683):

NJB Սաղմ. 29:9գ-ն դարձնում է Սաղմ. 29:10-11-ի մեկնարկը:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 29:10-11**

<sup>10</sup>ՏԵՐԸ ջրհեղեղի վրա է նստում .

ՏԵՐԸ հավիտյան թագավորելու է:

<sup>11</sup>ՏԵՐՆ Իր ժողովրդին գորություն է տալու,

ՏԵՐՆ Իր ժողովրդին խաղաղությամբ է օրհնելու:

**29:10** «Թագավոր» բառը 1-ին տողում չէ, այլ 2-րդում: Ջրհեղեղը վերաբերում է (1) Ծննդոց 6-9 (տես՝ Ծննդ. 6:17) կամ (2) սկզբնական ստեղծագործությանը (տես՝ Ծննդ. 1:2):

ՅԱՀՎԵԻ որպես Թագավոր գաղափարը վերադառնում է 1 Թագ. 8:7-ին: Այն սահմանվում է որպես աստվածաբանական պնդում Սաղմոս 10:16-ում և այստեղ: Նկարագրությունը ՅԱՀՎԵԻ մասին է գահի վրա նստած (տես՝ Սաղմ. 2:4, 113:5 և Եսայի 6 գլխի նկարագրությունը) կամ գավազանը ձեռքին:

#### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

❖ **«նստում է . . . թագավորելու է»** «Նստած» ԲԱՅԸ կամ «թագավորելու է (BDB 442, KB 444) հավիտյան» պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Ելից 15:18, Սաղմ. 9:7, 10:16, 29:10, 66:7, 145:13, 146:10, Երեմ. 10:10, Ողբ 5:19):

❖ **«ջրհեղեղի վրա»** ՆԱԽԴԻՐԸ ակնարկում է՝

1. գորություն և իշխանություն քառսի միջի ջրերի վրա (LXX)

2. ՅԱՀՎԵՆ երկնքում բարձր է վերը գտնվող ջրերից էլ (այսինքն՝ անձրևներից), բարձր է ամպերից (տես՝ Ծննդ. 1:6-7, Սաղմ. 148:4):

«Ջրհեղեղ» տերմինը (BDB 550) գտնվում է միայն Ծննդոցում և այստեղ՝ Սաղմոս 29:10-ում:

**29:11** Քանի որ ՅԱՀՎԵՆ Թագավոր է, Նրա ժողովուրդը ապահով են: Նրա խոստումները հաստատ են: Ապագայի համար Նրա նպատակները ապահովագրված են:

Անգամ «փոթորկի» մեջ, երբ բնության գորությունը թվում է թե կատաղի են, ՅԱՀՎԵԻ ժողովուրդը խաղաղության մեջ են (տես՝ Մատթ. 8:23-27, 14:22-33): Հիսուսը նույնպես ցույց է տալիս այս աստվածային գորությունը քամու և ալիքների վրա: